

# ԴԱՍ 11. ԳԼՈՒԽՆԵՐ 4-5 — ԵՐԿՆՔԻ ԳԱՅԱՍԵՆՅԱԿԸ

## Չափշտակություն (ամփոփում)

### The Harpazo (Summary)

- «Բացված դուռ». 4:1
- «Ձայն... փող (շեփոք)». Ա Թեսաղ. 4:15,16  
1 Թես. 4:15-16 - 15 Որովհետեւ ինքը Տէրը հրամանով, հրեշտակապետի ձայնով եւ **Աստուծո փողով** վայր կ'գա երկնքից. եւ Քրիստոսով մեռելներն առաջ հարություն կ'առնեն, <sup>16</sup> Եւ հետո մենք, որ կենդանի ենք մնացած նորանց հետ մէկտեղ ամպերով օդի մէջ կ'յափշտակուինք Տիրոջը դիմավորելու եւ այնպէս ամեն ժամանակ Տիրոջ հետ կ'լինինք:
- «Արի».  
- **իրական, նյութական երկինք. Ղուկ. 24:39**  
Տեսէք իմ ձեռքերը եւ իմ ոտները, որ ես ինքս եմ. շօշափեցէք ինձ եւ տեսէք. որովհետեւ ոգին մարմին եւ ոսկորներ չ'ունի, ինչպէս ինձ էք տեսնում որ ունեմ:  
- **քող. Ղուկ 23:45, Եբր. 10:19-20**  
Եւ արեգակը խավարեց, եւ տաճարի վարագույրը միջիցը ճղուեց:  
Արդ, եղբայրներ, որովհետեւ համարձակություն ունենք սրբարանը մտնելու Հիսուսի արյունով, <sup>20</sup> Որն որ նորոգեց մեզ համար նոր եւ կենդանի ճանապարհ վարագուրի միջով, այսինքն իր մարմնովը.

## Դասի օրակարգը

- Harpazo (հափշտակել) 4:1
- Աստծո գահը 4:2,3
- 24 երեցները 4:4
- 7 վառված ջահեր 4:5
- Ապակե ծովը 4:6
- Չորս կենդանիներ (քերովբէներ) 4:6-8  
- 4 դէմքեր՝ առյուծ, եգ, մարդ, առձիվ
- Յոթ կնիքով կնքված գիրքը գլ. 5  
- 24 երեցների ով լինելը

## Իրական փորձառություն

- «Քեզ ցույց տամ» — Հայտ. 4:1, 21:10
- «Նայեցի» — 70 անգամ Հայտնությունում
- «Տեսա» — 35 անգամ
- «Նկատեցի» — 7 անգամ
- «Լսեցի» — 23 անգամ



**Չայ. 4:1-2** - 1 Եւ սորանից հետո տեսա, եւ ահա մի **բացուած դուռ երկնքում**, եւ այն առաջին ձայնը, որ լսեցի **փողի** պէս որ խօսում էր ինձ հետ, ասեց. **Վեր ելի՛ր** այստեղ, եւ ես ցույց տամ քեզ ինչ որ լինելու է սորանից հետո: 2 Եւ ես շուտով Հոգում եղա. եւ ահա մի **աթոռ** կար երկնքում. եւ աթոռի վրա մէկը նստած:

## Գահեր.

- «**Գահ**» («**Աթոռ**») բառը ՆԿ-ում հայտնվում է 58 անգամ՝ 43 անգամ Հայտ. գրքում, որից 14-ը՝ Հայտ. 4-ում:
- **Մեսիան նստելու է.**
  - Իր Հոր աթոռին (Սաղմ. 110:1, Հայտ. 3:21)
  - «շնորհաց աթոռին» (Եբր. 4:16)
  - «Դավթի աթոռին» (Ես. 9:7, Ղուկ. 1:32)
- 12 առաքյալները կնստեն 12 գահերին (աթոռներին) և կդատեն 12 ցեղերը և հրեշտակներին (Մաթ. 19:28, Ա Կորն. 6:3)
- 24 երեցները նստում են գահերի (աթոռների) վրա (Հայտ. 4:4)
- Անհավատները կդատվեն «մեծ ճերմակ գահի» առաջ (Հայտ. 20:11)

3) «Եվ նստողը հասպիս ու սարդիոն քարերի տեսքն ուներ: Եվ գահի շուրջքովորը **ծիածան էր՝ զմրուխտի տեսքով**»:

«**Ծիածան**» բառը հունարեն iris բառն է, որ կարող է նաև նշանակել «լուսապսակ»:

Ծիածանը շատ նաշանակալի է: Աստվածաշունչը դրա մասին նշում է ընդամենը չորս անգամ:

Ծիածանը նույնացվում է բուն Աստծո ներկայության և էության հետ:

1. Ծննդոց 9 (հհ. 13,14,16). Նոյի ուխտը, որ կնքվեց Աստծո և բոլոր մարմինների միջև:
2. Եզեկիել 1:28. Եզեկիելը տեսիլքի մեջ Աստծո փառքը տեսնելիս: Նույն տեսարանը, որ Հովհաննեսը տեսավ «հոգու մեջ», Եզեկիելը տեսավ «տեսիլքի մեջ»:
3. Երրորդ դեպքը Հայտնության գրքում է. 4:3-ում:
4. Եվ կրկին 10:1-ում:

«**Զմրուխտ**». Ծննդ. 9:11-17, Ել. 24:10: Հասպիսը հետագայում հայտնվում է նաև Նոր Երուսաղեմի թե՛ պարսպի, թե՛ հիմքի մեջ (Հայտ. 21:11, 18-19):

Սարդիսը քահանայապետի լանջապանակի վրա էր և ներկայացնում էր Ռուբենին՝ Հակոբի անդրանիկին: (Հիսուսը մեռելներից անդրանիկն էր): Նոր Երուսաղեմի հիմքի վեցերորդ քարն է (Հայտ. 21:20): Փլինին ասում է, որ այն հայտնաբերվել է Սարդիսում և ուներ ալ կարմիր գույն:

**4) «Ու գահի շուրջը քսանչորս աթոռներ կային, ու աթոռների վրա քսանչորս երեցներ էին նստած՝ ճերմակ հանդերձներով ու գլխներին ոսկե պսակներ ունեին»:**

## 24 երեցները

- Դավթի 24 դասակարգումները (Ա Մն. 24:1-19). յուրաքանչյուր դասակարգություն ներկայացնում էր 2 Շաբաթ ծառայություն տարին մեկ անգամ:
- Ոչ-ղևտական քահանայական կարգեր.
  - Հոթոր. Ել. 3:1
  - Հակոբի տասանորդը? Ծննդ. 28:22
  - Մելքիսեդեկ. – Ծննդ. 14:18-20
  - Մեսիանական. – Սաղմ. 110:4, Եբր. 5,6,7

## Ովքեր են այս երեցները

- «Երեց» (presbuteros) բառն Աստվածաշնչում միշտ օգտագործվել է տղամարդկանց համար
- Երեցները (ծերերը) միշտ եղել են ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչները թե՛ Իսրայելում, թե՛ Եկեղեցում:

- Եսայի 6 և Եզեկիել 1-10 գլուխների տեսիլքներում երեցների մասին հիշատակում չկա. փրկվածների հոգիները դեռևս պահվում էին Հադեսում (In Hades):
- Երեցները ճերմակ կտավ էին հագել (ինչպես խոստացվել էր հաղթող հավատացյալներին Հայտնություն 3:5-ում) և հաղթողի պսակներ էին դրել (Հայտ. 2:10 և 3:11):

### **Չեն կարող լինել.**

- Նեղության ժամանակաշրջանի հավատացյալները Հայտ. 7:13-14

**Չայ. 7:13-14** - <sup>13</sup> Եւ երեցներից մէկը պատասխանելով ասեց ինձ. Սորանք որ սպիտակ հանդերձներ են հագել՝ ո՞վ են եւ կամ ո՞րտեղից են եկել: <sup>14</sup> Եւ ես ասեցի նորան. Տէր, դու գիտես. եւ նա ասեց ինձ. Սորանք են որ գալիս են այն **մեծ նեղութիւնից**, եւ իրենց հանդերձները լուացին եւ սպիտակացրին Գառի արյունով:

- Հրեշտակներ Հայտ. 7:11

**Չայ. 7:11** - <sup>11</sup> Եւ բոլոր հրեշտակները կանգնել էին աթոռի եւ երեցների եւ չորս կենդանիների չորս կողմովը, եւ ընկնում էին երեսների վերա աթոռի առաջին եւ երկրպագում էին Աստուծուն:

- Իսրայել ժողովուրդը Հայտ. 7 և 12

### **Պսակների խոստումը**

1. Կյանքի պսակ (Հակ. 1:12, Հայտ. 2:10)
2. Արդարության պսակ (Բ Տիմ. 4:8) նրանց, ովքեր սիրեցին Նրա հայտնվելը
3. Փառքի պսակ (Ա Պետ. 5:4) նրանց, ովքեր կերակրում են Տիրոջ հոտը
4. Անթառամ պսակ (Ա Կորն. 9:25) նրանց, ովքեր հաստատուն են Թաուս մինչև վերջ
5. Ուրախության պսակ (Ա Թեսաղ. 2:19) նրանց, ովքեր հոգիներ են շահում: Պսակներ (stephanos). Ա Կորն. 9:25, Ա Թեսաղ. 2:19, Բ Տիմ. 4:8, Հակ. 1:12, Ա Պետ. 5:4: Վարձատրություն աշխատանքի համար (ոչ թե փրկություն) Հակ. 1:12: Երբևէ խոստացված չէ հրեշտակներին: Վարձքը Նրա հետ է:

5)«Եվ գահից փայլակներ ու որոտներ և ձայներ էին լսվում. ու գահի առջև **կրակի յոթ ջահեր էին վառվում**, որոնք Աստծո յոթ հոգիներն էին»:

6)«Եվ գահի առջև ապակե մի ծով կար՝ բյուրեղի նման, ու գահի մեջտեղում ու գահի շուրջը **չորս կենդանիներ՝** առջևից ու ետևից աչքերով լի»:

7)«Եվ առաջին կենդանին նման էր **առյուծի**, իսկ երկրորդ կենդանին նման էր **եզի**, իսկ երրորդ կենդանին **մարդու** դեմք ուներ, ու չորրորդ կենդանին **թռչող արծվի** նման էր»:



**Ել. 30:18-21** - 18 Նաեւ մի պղնձի ավազան շինես **լուացման համար**, եւ նորա խարիսխն էլ պղնձի լինի. եւ ժողովքի խորանի եւ սեղանի մէջտեղը դնես այն, եւ նորա մէջը ջուր լցնես: 19 Եւ Ահարօնն ու նորա որդիքը իրանց ձեռքերն ու ոտքերը լուանան նորանից: 20 Ժողովքի խորանը մտնելիս ջրով լուացուին որ չմեռնեն՝ կամ սեղանին մօտենալիս, որ պաշտօն կատարեն և կրակով Եհովային զոհ մատուցանեն: 21 Այսպէս իրանց ձեռքերն ու ոտքերը լուանան որ չմեռնեն. եւ սա իրանց համար հավիտենական կանոն լինի, թէ իր համար եւ թէ իր սերունդի համար իրանց ազգերի մէջ:

**2 Մնաց. 4:2-5** - 2 Եւ ձուլած ծովը շինեց, նորա մէկ շրթունքից մինչեւ միւս շրթունքը տասը կանգուն էր, բոլորաձև էր շուրջանակի, եւ հինգ կանգուն բարձրութիւնը, եւ մի երեսուն կանգունանոց դերձան շրջապատում էր նորան շուրջանակի. 3 Եւ եզների նմանութիւններ կային նորա տակին, որ շուրջանակի նորան շրջապատում էին, և կոճակները տասը՝ մէկ կանգունում պատում էին ծովը շուրջանակի. Երկու կարգ եզներ ձուլուած նորա ձուլուելու ժամանակ: 4 Նա կանգնած էր տասնեւերկու եզների վերայ՝ երեքը նայում էին հիւսիս, եւ երեքը նայում էին արեւմուտք, երեքը նայում էին հարաւ եւ երեքը նայում էին դէպի արեւելք, եւ ծովը վերելից նորանց վերայ էր. Եւ նորանց ամենի ետեւի կողմերը դէպի ներս էր: 5 Եւ նորա հաստութիւնը ձեռքի չափ էր, եւ նորա շրթունքը բաժակի շրթունքի գործ էր իբրեւ շուշան ծաղիկ: Պարունակութիւնը երեք հազար մար էր տանում:

8)«Ու չորս կենդանիներից յուրաքանչյուրը վեցական թն ուներ, որ ներսի կողմից աչքերով լի էին. ու հանգիստ չէին առնում ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը՝ ասելով. **«Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տեր Աստված Ամենակալ, որ էր և որ է, և պիտի գա»:**

Ես. 6:3. հղում Երրորդությանը:

## **Չորս դեմքերն Աստծո գահի առջև.**

Եսայի 6, Եզեկիել 1, 10, Թվոց 2, Չորս Ավետարանները

## **Չորս դեմքերը ներկայացնում են Քրիստոսին**

1. **Առյուծի դեմք.** մեր Տերն իրոք Հուդայի ցեղի Առյուծն է (Հայտ. 5:5):
2. **Մարդու դեմք.** Նա այնքան սովորական էր, որ մարդիկ զարմանում էին. « Մի՞ թե Սա հյուսնի որդին չէ» (Մաթ. 13:55):
3. **Եզի դեմք.** եզր ծանրություն վերցնող կենդանի է, պատրաստ ծառայելու, աշխատելու և գոհաբերվելու մյուսների համար: Տեր Հիսուսը չեկավ ծառայեցնելու, այլ ծառայելու, տալով Իր կյանքը որպես փրկագին շատերի համար (Մարկ. 10:45):
4. **Արծվի երես.** Աստվածաշնչում արծիվը ներկայացնում է Աստծո ճախրող, տեղաշարժվող, հզոր աստվածային կյանքը: Այն ներկայացնում էր արծվի դեմք, որ ճախրում է թե՛ նեղությունների, թե՛ հաղթանակների վրա:

## **Չորս դեմքերը ներկայացնում են Ավետարանների կառուցվածքը.**

Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես:

## **Սերնդաբանությունը.**

Մատթեվոս — Մեսիա, Ուղղված է հրեաներին, Աբրահամ (Իրավունքը)

Մարկոս — Ծառա, Ուղղված է հռոմեացիներին

Ղուկաս — Մարդու Որդի, Ուղղված է Հույներին, Ադամ (արյան հետազիծը)

Հովհաննես — Աստված, Ուղղված է եկեղեցիներին, (նախապես գոյություն ունենալը)

9) «Ու երբ այդ կենդանիները փառք, պատիվ ու գոհություն էին հայտնում գահի վրա նստածին, որ ապրում է հավիտյանս հավիտենից»:

10) «Քսանչորս երեցները ընկան գահին նստածի առջև ու երկրպագում էին Նրան, ով հավիտյանս հավիտենից ապրում է, և իրենց պսակները նետում էին գահին նստածին, ասելով»:

11) «Դու արժանի ես, Տե՛ր, փառք ու պատիվ ու գոհություն ստանալու, քանի որ Դու ստեղծեցիր ամեն ինչ, ու Քո հաճույքի համար եղան ու ստեղծվեցին»:

## Յոթ կնիքով կնքված գրքույկը.

### Հայտնություն 5գլ.

Նախքան Ք.Հ. 2-րդ դարը, գրքերը գալարներ էին: Էջերով գրքերը կոչվում էին «codex»: Կնքված գիրքը, պայմանները դրսից գրված և կնքված, ենթադրում էր սեփականության իրավունք: Հռոմեական օրենքը պահանջում էր, որ Կտակը կնքված լիներ յոթ կնիքով (ինչպես ներկայացված էր Օգոստոսի և Վեսպասիանի կտակներում):

### Յոթ կնիքով կնքված գիրքը (գալարը)

- 1) «Եվ ես գահի վրա նստածի աջ ձեռքում մի **գիրք** տեսա՝ գրված ներսից ու դրսից, **յոթ կնիքով կնքված**»:
- 2) «Ու մի գորավոր հրեշտակ տեսա, որ բարձր ձայնով գոչում էր. «Ո՞վ է արժանի այս **գիրքը** բացելու և դրա կնիքները քանդելու»:
- 3) «Եվ ո՛չ երկնքում, ո՛չ երկրի վրա ու ո՛չ երկրի տակ չգտնվեց մեկը, որ կարող լիներ **գիրքը** բացելու և կամ դրան նայելու»:
- 4) «Եվ ես սաստիկ լալիս էի, որ չգտնվեց արժանի մեկը, որ բացեր ու կարդար **գիրքը** կամ նայեր նրան»:
- 5) Եւ երեցներից մեկն ասեց ինձ. Լաց մի եղիր, ահա հաղթեց **առիւծը** որ Յուդայի ցեղից է՝ **Դավիթի Արմատը**, որ բաց է անելու գիրքը եւ նորա եօթը կնիքները լուծէ:
- 6) Եւ տեսա, եւ ահա այն աթոռի մէջ եւ չորս կենդանիների մէջ եւ երեցների մէջ մի **Գառ** կանգնած մորթուածի նման, որ եօթը եղջիւր ուներ եւ **եօթ աչք**, որ Աստուծո **եօթը Հոգիներն են**, որ ուղարկվում են բոլոր երկիրը:

Սրանք բոլորը հրեական անվանումներ են. Գառան մասին հղում չկա «յոթ եկեղեցիների» նամակներում: Հով. 1:29, 36, Գործք 8:32, Ա Պետ. 1:19: «Գառ». այսպես է Հովհաննէս Մկրտիչը Նրան հրապարակայնորեն ներկայացնում: Նոր Կտակարանում դա «amnos» բառն է, օրինակ՝ Հովհ. 1:29,36, Ա Պետ. 1:19, Գործք 8:32 (Ես. 53:7): Երեմիան էլ է օգտագործում գառ բառը.

«Բայց ես մի գառնուկի պես էի, կամ եզան, որին մորթելու են տանում» (Եր. 11:19): Սա շեշտված է. «կարծես թե մորթված»:

**Գառ** = Նրա առաջին գալուստը,

**Առիւծ** = Նրա երկրորդ գալուստը: Նշում. Նա թագավորելու է Սիոն սարից (Երուսաղեմ): Սաղմ. 2:6:

Առյուծ. Հակոբի վերջին օրհնությունն իր որդիներին. Ծննդ. 49:8-10 (Հովս. 5:14, Եբր. 7:14)

- «**Յոթ եղջյուրներ**». իշխանության խորհրդապատկեր. Բ Օր. 22:17, Ա Թագ. 22:11, Զաք. 1:18, Սաղմ. 75:4: Նան, պատիվ. Ա Թագ. 2:1-10, Սաղմ. 89:17,24, Սաղմ. 112:9,10, 148:14:
- «**Յոթ աչքեր**». Աստծո յոթ հոգիները. Զաք. 3:8,9, 4:10:

## Yeshua Ha Mashiach

1-3 գլուխներում Հիսուս Քրիստոսի 24 տիտղոսներ են օգտագործված: Այս տիտղոսները վերաբերվում են Նրան ու Նրա ներկայիս դերին և հայտնի են դարձել եկեղեցու համար: Սրանից հետո մենք տեսնում ենք, որ շեշտվում են հրեական տիտղոսները: Իսրայելը վերադառնում է բեմահարթակի կենտրոն, քանի որ մարդկության պատմությունը մոտենում է իր ավարտին: Ամբողջ աշխարհի պատմությունը մոտենում է իր գագաթնակետին, և դրա կիզակետը Իսրայել ազգն է: **Կարևոր միտք. տարբերեք Իսրայել ազգը Եկեղեցուց:** Երկրավոր խոստումները (Իսրայելին) հիմա պետք է կատարվեն: Սուրբ Հոգին ՆԿ-ի 73 համարներում 75 հղում է անում Իսրայել ժողովրդի ֆիզիկական սերնդին: (Հռոմ. 9,10,11):

- **Դավթի Արմատ.** Ես. 11:1,10, Եր. 23:5,6, Հռոմ. 15:12, Հայտ. 22:16, Մաթ. 1:1

Նա Դավթի ցեղից էր, սակայն հենց Ինքն էր, որ ստեղծել էր Դավթին (և նրա սերունդը): Նա օգտագործում է այս պարադոքսը փարիսեցիների հետ վիճաբանելիս (Մաթ. 22:41-46): Ըստ Աստծո հետ ուխտի, նրա սերունդը պետք է իշխեր ամբողջ երկրի վրա (Բ Թագ. 7, Սաղմ. 2:8), այս նույն բանն ասվեց Մարիամին (Ղուկ. 1:33):

Պիղատոսը նույնպես գրեց մի անուն և փակցրեց խաչին: Գրված էր այսպես. «Հիսուս Նազովրեցի՝ հրեաների թագավոր»: Այս անունը շատ հրեաներ կարդացին, քանի որ Հիսուսի խաչելիության վայրը մոտ էր քաղաքին, և այն գրված էր եբրայերեն, հունարեն և լատիներեն: Քահանայապետերը Պիղատոսին ասացին. «Մի՛ գրիր՝ հրեաների թագավոր, այլ՝ որ Նա ասաց. Ես հրեաների թագավորն եմ»: Պիղատոսը պատասխանեց. «Ինչ որ գրեցի՝ գրեցի» (Հովհ. 19:19-22):



7) «Եվ Նա եկավ ու գահի վրա նստածի աջ ձեռքից վերցրեց գիրքը»:

8) «Ու երբ գիրքը վերցրեց, չորս կենդանիները և քսանչորս երեցներն ընկան Գառնուկի առջև, և ամեն մեկն իր քնարն ուներ ու **խնկով** լեցուն ոսկե խնկամանը, որ սրբերի աղոթքն է»:

**Խունկ, բուրմունք** = աղոթքներ (Հայտ. 8:3,4, Սաղմ. 141:2): Սա Աստծո նվիրյալների աղոթքներն են: Մենք՝ փրկվածներս, մասնակցում ենք փրկության գործին մեր աղոթքներով: Աղոթքի միջոցով Աստված քեզ ներգրավում է Իր գործի մեջ (Ա Տիմ. 2:1-4. «Քո թագավորությունը գա»): (Երկնային երգչախմբի փառաբանությունը. 5:7-14...):

9) «Եվ նրանք մի նոր երգ երգեցին՝ ասելով. «Դու արժանի ես այդ գիրքը վերցնելու և դրա կնիքները բացելու, որովհետև մորթվեցիր ու Քո արյունով մեզ գնեցիր Աստծո համար՝ ամեն ցեղից ու լեզվից, ժողովրդից ու ազգից»:

10) «Եվ մեզ դարձրիր **թագավորներ ու քահանաներ** մեր Աստծուն. ու մենք թագավորելու ենք **երկրի վրա**»:

Հայտնության գրքում երեք անգամ գրված է, որ հավատացյալները թագավորներ ու քահանաներ են լինելու (Հայտ. 1:6, 5:10, 20:6): Սա հատկապես վերաբերվում է հազարամյա թագավորության ժամանակներին (Ղուկ. 19:17):

11) «Եվ նայեցի ու բազմաթիվ հրեշտակների ձայներ լսեցի, որոնք գահի, կենդանիների ու երեցների շուրջբոլորն էին, ու նրանց թիվը բյուր բյուրավոր ու հազար հազարավոր էին»:

12) «Որոնք բարձր ձայնով ասում էին. «Գառնուկը, որ մորթված էր, արժանի է ստանալու գորություն, հարստություն, իմաստություն, կարողություն, պատիվ, փառք ու օրհնություն»:

Նրան պաշտում են այն բանի համար, թե ով է Ինքը, որտեղ է Ինքը (ոչ թե մտորում, երուսաղեմում, իսաչի վրա, կամ գերեզմանում): Նա գահի կենտրոնում է. և թե ինչ է Նա արել:

### **Յոթ տիրույթներ**

- 1) **Չորություն.** Նա մեկը չէ, որ երազում է, բայց երբևէ չի կարողանում իրականացնել, ծրագրավորում է, բայց չի կարողանում հասնել: Նա գորավոր է (Մաթ. 28:18, Ա Կորն. 1:24, Կող. 1:16-17, Եբր. 1:3, Մարկ. 5:1-20, 25-29, 35-43):

- 2) **Չարստություն.** չկա մի կարիք, որ Նա չկարողանա բավարարել, չկա մի խոստում, որ Նա չկարողանա Իրականացնել (Բ Կորն. 8:9, Եփ. 3:8):
- 3) **Իմաստություն.** թե՛ գաղտնիքները, թե՛ գործնական գիտելիքները (Ա Կորն. 1:24, Հակ. 1:5):
- 4) **Կարողություն.** որով Նա կարող է զինաթափել չարի գորությունն ու տապալել սատանային (Սաղմ. 24:8, Մաթ. 12:29, Ղուկ. 11:22):
- 5) **Պատիվ.** Ում առաջ բոլոր ծնկերը պիտի ծավլեն, և ամեն լեզու պիտի դավանի, որ Նա իրոք Տեր է (Փիլ. 2:11, Սաղմ. 104:1, Սաղմ. 8:5, Եբր. 2:7,9):
- 6) **Փառք.** որ միայն Նրան է պատկանում (Հովհ. 1:14, 2:11, 11:4,40, 17:5,24):
- 7) **Օրհնություն.** այդ ամբողջի անխուսափելի գագաթնակետն է. Նա այդ բոլորը իջեցնում է մեր՝ իմ ու քո, վրա (Սաղմ. 103:1-2):

13) «Ու լսեցի, որ ամեն մի արարած, որ երկնքում է, երկրի վրա և երկրի տակ, և դրանք, որ ծովում են, ու այն ամենը, ինչ նրանց մեջ կա, ասում էին. «Գահի վրա նստողին ու Գառնուկին օրհնություն ու պատիվ, փառք ու գորություն հավիտյանս հավիտենից»:

14) «Եվ չորս կենդանիներն ասացին. «Ամեն»: Ու քսանչորս երեցներն ընկան ու երկրպագեցին Նրան, որ ապրում է հավիտյանս հավիտենից»:

### Գալիք դասընթացներ

- Չորս բաներ այլ տեղերում.
  - Եկեղեցին, (որ հիմա) երկնքում է
  - Իսրայել ազգը, որ պետք է լինի Խոստացյալ Երկրում
  - սատանան, որ պետք է լինի Կրակե Լճում
  - Քրիստոսը, որ պետք է Իր սեփական գահի վրա լինի
- Այսպիսով, հիմա սկսվում է «հրավառությունը». 6-19 գլուխները մանրամասն նկարագրում են Հին և Նոր Կտակարաններում ամենաշատը խոսված ժամանակահատվածը՝ Դանիելի «յոթերորդ շաբաթը»: